ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«17» 02 2026թ.

N 20/118

Օր. N 1

«ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի
տնօրեն Հ. Հարությունյանին
Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ. ք. Վանաձոր, Գր. Լուսավորիչի Փ./Շ/53
ՀՎՀՀ՝ 06975627
էլ. հասցե՝ firm2025@mail.ru

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) (ՀՎՀՀ 06975627, գործունեության հասցե՝ ք. Երևան, ՀՀ, Լոռու մարզ. ք. Վանաձոր, Գր. Լուսավորիչի Փ./Շ/53) միջև 10.02.2025 թվականին կնքվել է N «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-ՏՆՏ1-3» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 18.03.2025 թվականին կնքված N 1 (11/236-2025) համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր), համաձայն որի՝ Վաճառողը ստանձնել է ներքոհիշյալ ***Աղյուսակ 1-ում** ներկայացվող ապրանքների մատակարարման պարտավորությունը (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի պահանջների:

***Աղյուսակ 1**

Ապրանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ընդհանուր գինը / ՀՀ դրամ	միավոր գինը / ՀՀ դրամ	ընդհանուր քանակը / չափման միավորը		մատակարարման հասցեն	մատակարարման ենթակա քանակը	մատակարարման ժամկետը
5	31531730/513	լուսամփոփներ	548776.00	1371.94	400	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	400	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
14	31512430/503	շիկացման լամպեր	135300.00	902.00	150	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	150	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
44	31211120/515	ապահովիչների արկղեր	51000.00	2550.00	20	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	20	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում

45	31211120/516	ապահովիչների արկղեր	51000.00	2550.00	20	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	20	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
56	31331194/505	էլեկտրական մալուխ՝ ՎՎԳ	605220.00	302.61	2000	մետր	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	2000	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
57	31331194/506	էլեկտրական մալուխ՝ ՎՎԳ	761634.00	448.02	1700	մետր	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	1700	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
61	31331192/502	էլեկտրական մալուխ՝ ԱՎՎԳ	563100.00	469.25	1200	մետր	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	1200	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
62	31331192/503	էլեկտրական մալուխ՝ ԱՎՎԳ	1008300.00	672.20	1500	մետր	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	1500	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
63	31331192/504	էլեկտրական մալուխ՝ ԱՎՎԳ	451440.00	902.88	500	մետր	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	500	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
64	31331192/505	էլեկտրական մալուխ՝ ԱՎՎԳ	752280.00	1504.56	500	մետր	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	500	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
65	31331192/506	էլեկտրական մալուխ՝ ԱՎՎԳ	797880.00	1994.70	400	մետր	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	400	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
68	44322530/501	մալուխային միացումներ	143040.00	47680.00	3	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	3	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
69	44322530/502	մալուխային միացումներ	95520.00	47760.00	2	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	2	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
70	44322530/503	մալուխային միացումներ	95520.00	47760.00	2	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	2	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
71	44322530/504	մալուխային միացումներ	91560.00	45780.00	2	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	2	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
72	44322530/505	մալուխային միացումներ	119520.00	39840.00	3	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	3	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
89	44411751/501	սանհանգույցի ճաքի պարագաներ	344760.00	2298.40	150	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	150	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
95	44112250/501	տանիքի նյութեր	1266140.00	3165.35	400	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	400	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
103	39839300/502	թիակ՝ ձյուն մաքրելու համար	174600.00	3492.00	50	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	50	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում
109	30192230/501	սկոչ՝ երկկողմանի սոսնձված	194880.00	9744.00	20	հատ	ք. Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	20	Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը՝ Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագրի 2.4.1 և 2.4.4 կետերի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Գնորդին հանձնել ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ N N 5, 14, 44, 45, 56, 57, 61, 62, 63, 64, 65, 68, 69, 70, 71, 72, 89, 95, 103 և 109 չափաբաժիններով Ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում՝ մինչև 30.06.2025թ.:

Վաճառողը 24.12.2025թ. թիվ 2 գրությամբ հայտնել է Գնորդին, որ 2025թ. փետրվարի 10-ին «ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության միջև կնքված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-ՏՆՏ1-3» պայմանագրի շրջանակում N 69 չափաբաժնով՝ 95520 (իննսունհինգ հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ ընդհանուր գումարի նախատեսված 2 հատ մալուխային միացումների մատակարարումը չի կարող իրականացնել, քանի որ նշված ապրանքները շուկայում առկա չեն, ուստի Վաճառողի կողմից հնարավոր չէ մատակարարել Պայմանագրով նախատեսված մալուխային միացումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Հիմք ընդունելով, «ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊ ընկերության 24.12.2025թ. թիվ 2 գրավոր հավաստումը՝ Պայմանագրի N 69 չափաբաժնով ապրանքի մատակարարումից հրաժարվելու մասին և Պայամանագրի 8.11 կետը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի մասնակի՝ չմատակարարված N 69 չափաբաժնի ապրանքի մասով լուծում է 10.02.2025 թվականին կնքված N «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-ՏՆՏ1-3» ծածկագրով պայմանագիրը և դրա հիման վրա 18.03.2025 թվականին կնքված N 1 (11/236-2025) համաձայնագիրը:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է** պայմանագրով նախատեսված կամ **գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ **գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,** և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ Դուք վճարեք պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը Ձեզ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում չի կայացնի և չի ներկայացնի լիազորված մարմին:

Բացի այդ, «ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն փոխանցել 525.36 (հինգ հարյուր քսանհինգ դրամ երեսունվեց լումա) ՀՀ դրամ՝ որպես տույժ և տուգանք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ N «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-ՏՆՏ1-3» ծածկագրով պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագրի բնօրինակը):

Տեղեկացնում ենք, որ եթե «ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 06975627, գործունեության հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ. ք. Վանաձոր, Գր. Լուսավորիչի Փ./Շ/53) կողմից վճարման ենթակա գումարները (պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 9600 (ինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ 14400 (տասնչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ փոխանցվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ընդգրկելու վերաբերյալ համապատասխան գործողություններ:

Ա. Հակոբյան